# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

## Ի ՎԱՐՉՈՒԹԵՆԷ ՃԵՄԱՐԱՆԻ

1. Քննութիւնք ընդունելութեան յաշակերտութիւն Հոգևոր Ճեմարանի Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի կատարին մի անգամ և եթ ի տարւոջ և այն աւուրբք ինչ յառաջ քան զսկիզբն ուսումնական տարւոյ:

2. Յանկացողք մտանել յաշակերտութիւն Ճեմարանիս մատուցեն խնդիր յանուն Ամենապատիւ-Տեղակալին, ոչ անագան քան զհնգետասան Օգոստոս ամսոյ: (Կան. 7 է յօդ.):

3. Ընդ խնդրագրին պարտէ առաջի առնել զվկայագիրս ուսման, բարի վարուց, ծննդեան և մկրտութեան և պատուաստման ծաղկի:

4. Նորեկ աշակերտք և ուսանողք զննին ի բժշկէ Ճեմարանիս, որ և տայ Տեսչին գրաւոր տեղեկութիւն զառողջութենէ նոցա:

5. Ի գպրոցական դասարանս ընկալեալ լինին առհասարակ ուսեալքն ի վարժարանս և կամ հրահանգեալքն առտնին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան Ճեմարանիս՝ նոքա միայն, որք ունին վկայագիր աւարտման գպրոցական դասընթացից:

6. Յետ կանոնաւոր հարցաքննութեան ընկալցին յաշակերտութիւն յամենայն դասարանս Ճեմարանիս. իսկ վասն մտանելոյ յԱռաջին Լսարան՝ ենթարկեսցին հարցաքննութեան յայն յամենայն առարկայս՝ զորս կարեւոր համարիցի Ուսումնական խորհուրդն:

Ծանօթութիւն: Վասն մտանելոյ յԴ. դասարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից երկդասեան եկեղեցական-ծխական ուսումնարանաց. իսկ վասն մտանելոյ ի միւս դասարանս աշակերտք պարտին քննիլ ըստ ծրագրի հաստատելոյ ի Վեհափառ Կաթողիկոսէն, ի պէտս ծխական դպրոցաց:

7. Յանկացողք մտանել յառաջին լսարան Ճեմարանիս վկայագրով աւարտման գպրոցական դասընթացից, վերստին ունին ենթարկիլ հարցաքննութեան յամենայն առարկայս, եթէ չիցէ աւարտմանն նոցա անցեալ ի վեր քան ուսումնական ամ մի:

8. Յետ հարցաքննութեան ընկալեալ լիցին ի շարս աշակերտաց, որք արժանաւոր գտցին յՈւսումնական խորհրդոյն:

Ծանօթութիւն. Պահանջի գի ընկալեալքն յաշակերտութիւն լիցին ուշիմք, երկարոգիք, փափկաձայնք, բարեկազմք և բարեբարոյք.

9. յԴ. դասարան ճեմարանին ընկալեալ լիցին պատանիք 14 – 16 ամեայք, և ըստ այսմ համեմատութեան ի յաջորդ դասարանս:

10. Աշակերտք ճեմարանի գիշերօթիկք են ամենեքեան, թէ ձրիավարժքն և թէ թոշակաւորքն, որք ստանան զուսումն, սնունդ, հագուստ և զամենայն առողջապահական խնամս:

11. Թիւ ձրիավարժից, որ ի հաշիւ Մայր Աթոռոյս, որոշի յայսմ ամի, ըստ բարեհաճ կարգադրութեան Ամենապատիւ Տեղակալին; (Կանոնադր. յօդ. 83):

12. Աշակերտեալքն պարտին կանխաւ մատուցանել ի գրաւ՝ յայսկոյս Կովկասեանք 50 րուբլիս, իսկ եկեալքն յայլոց վիճակաց Ռուսաստանի կամ ի տար աշխարհաց՝ րուբլիս 75, որպէս զի հատուսցի այդ ի ծախս վերադարձի նոցա ի հայրենիս, եւս և ի գին կորուսեալ և փատեալ գրենոյ, հանդերձեղինաց և այլոց իրեղինաց:

13. Իւրաքանչիւր թոշակաւոր վճարեսցէ ի տարին րուբլիս 200, ի կրկին նուագս. ի սեպտեմբեր և ի յունուար ամիսս:

14. Եթէ թոշակաւոր ոք ելցէ կամ արձակեսցի մինչև բոլորեալ ուսումնական կիսամեկին, թոշակ նորա ոչ դարձուսցի յետս:

15. Ցամառնային արձակուրդս, եթէ ծնողք կամ բարերարք կամիցին տանել զորդիս իւրեանց ի հայրենիս, ծախք երթևեկութեանց նոցա լիցին ի ծնողաց կամ ի բարերարաց:

ՏԵՍՈՒՉ ՃԵՄԱՐԱՆԻ՝ ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ: